ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՔՈՒՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԺԱՍՄԵՆ ԷԼՋԻՐԵԿՅԱՆ

Քուշանները իրանալեզու ցեղեր էին, որոնք ապրում էին Պարսկաստանին հյուսիս-արևելքից սահմանամերձ Բակտրիայում և Միջին Ասիայի տարածքում։ Զավթողական նպատակներով նրանք հաճախ արշավում էին Պարսկական պետության սահմանները։

Քուշանների ու նրանց հաջորդների մասին վկայություններ պահպանվել են հունա-բյուզանդական, պարսկա-արաբական, չինական և հնդկական սկզբնաղբյուրներում։ Բյուզանդական աղբյուրներում նրանք հայտնի են էֆթալիտներ (Ἐφθαλῖται) *կամ սպիտակ հոներ* (λευκοὶ Οὖννοι) *անվանումներով, պարսկականում՝ հեթալ* (Hetal), *արաբականում՝ հայթալ* (Haital), *չինական ժամանակագրություններում՝ գուհշուան-քուշան*[1] *(պետությունը կոչվում էր Մեծ Ցուե-Չժի), հնդկականում՝ խունա-հունա։ Հայ միջնադարյան պատմիչների երկերում նրանք հայտնի են* **քուշաններ, հոներ, հեփթաղներ, թեթալացիներ** *անվանումներով։*

Հայկական սկզբնաղբյուրները քուշանների մասին հաղորդում են քիչ, բայց կարևոր վկայություններ։ Դրանք երբեմն լրացնում, նոր երանգներ են հաղորդում քաղաքական այս կամ այն իրադարձությանը։ Այդ վկայությունների արժանահավատությունը հաստատվում է այլ աղբյուրներով։ Միայն հայ պատմիչների հաղորդած վկայություններով հնարավոր է ներկայացնել սեղմ, բայց կապակցված քաղաքական պատմության պատկեր, քանի որ նրանք նկարագրվող դեպքերի ժամանակակիցն են, երբեմն էլ ականատեսը։ Սակայն հայ պատմիչների վկայությունները երկար ժամանակ դուրս են մնացել գիտական շրջանառությունից։ Մարկվարտը[2] *և Գիրշմանը*[3] *ինչ-որ չափով օգտագործել են նաև հայ պատմիչների հաղորդած վկայությունները։ Ռուս պատմագրության մեջ Պիգուլևսկայան*[4] *առաջիններից էր, որ օգտվեց քուշանների մասին Եղիշեի հաղորդած վկայություններից։ Այնուհետև, Տրեվերը*[5] *ավելի մանրակրկիտ անդրադառնալով հայ պատմիչներին, հանգեց հետա-*

---

[1] *Գուհշուանը քուշան անվան չինական տառադարձությունն է* (E. G. Pulleyblank, The Consonantal System of Old Chinese. „Asia Major" New Series, vol. IX, pt. 1, 1962, *էջ 18*).

[2] J. Marquart, Eranšahr nach der Geographie des ps. Moses Xorenac'i, Berlin, 1901.

[3] R. Ghirshman, Les Chionites-Hephtalites, „Mémoires de la Délégation archéologique française en Afghanistan" *(այսուհետև՝* MDAFA), t. XIII, Le Caire, 1948.

[4] Н. В. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1941; ее же—Месопотамия на рубеже V—VI вв. н. э. Сирийская хроника Иешу Стилита как исторический источник, М.—Л., 1940.

[5] К. В. Тревер, Кушаны, хионниты и эфталиты по армянским источникам V—VII вв. («Советская археология», т. 21, 1954, стр. 131—147).

քրբքիր եղրակացություններին։ Ակադեմիկոս Գաֆուրովը[6] տաջիկների մասին գրած իր աշխատության մեջ, քաղաքական պատմության մի շարք հարցերի կապակցությամբ, անդրադառնում է նաև հայ պատմիչներին։

Քուշանական պետության հիմնադրման վոնկրետ թվականը պատմագրության մեջ դեռևս պարզված չէ։ Հնդկաստանում հայտնաբերված մի շարք արձանագրություններ հիշատակում են քուշանական տիրակալներին և նրանց թագավորության տարիները, որոնք, սակայն, ենթարկվում են հատուկ տոմարի։ Յավոք, առ այսօր այդ տոմարի և ժամանակակից տոմարների առնչության հարցը որոշված չէ[7]։ Հայտնաբերված դրամները[8] նույնպես չունեն թվական։ Դրանց միջոցով վերականգնվել է միայն քուշանական տիրակալների հաջորդականությունը։

Չինական ժամանակագրության համաձայն «Մեծ Յուե-Չժին վերաբնակվելով Բակտրիայում՝ բաժանված էր հինգ վասալական տիրույթների։ Դրանք էին՝ Խյումի, Շուանմի, Դուհշուան, Խիսյե և Դումի։ Ավելի քան հարյուր տարի անց Գուհշուանի իշխան Կիոցզյուկուն[9] իրեն ենթարկեց մյուս չորս իշխանությունները և հայտարարվեց գուհշուանական (քուշանական) պետության թագավոր։ Նա զավթեց Անսյին, նվաճեց Գաոֆոն, ոչնչացրեց Պուդուն[10] և Գիբինը[11], միավորեց նրանց հողերը։ Կիոցզյուվուն ապրեց ութսուն տարի։ Նրա մահից հետո գահն անցավ որդուն՝ Յանգաոչժենին, որն իր հերթին զավթեց նաև Հնդկաստանը, այնտեղի ղեկավարությունը հանձնելով իր զորավարներից մեկին։ Այդ ժամանակներից սկսած՝ Յուե-Չժին շատ ուժեղացավ և հարստացավ։ Հարևան երկրները նրան անվանում էին քուշանական պետություն, բայց չինական արքունիքը առաջվա պես նրան կոչում էր Մեծ Յուե-Չժի»[12]։

Այս իրադարձությունները տեղի են ունեցել մ. թ. ա. I դարի կեսերին։ Կադֆիս Ա-ի թագավորության տարիներին, ընդարձակվելով հարևան պետությունների տարածքների հաշվին, քուշանական պետությունը դուրս էր եկել Բակտրիայի սահմաններից։ Հնագիտական պեղումներից հայտնաբերված դրամների մակագրություններում Կադֆիս Ա-ն ունի ինչպես «յաբղու» (առաջ-

---

[6] Б. Г. Гафуров, Таджики, М., 1972.

[7] R. Ghirshman, Bégram, Recherches archéologiques et historiques sur les Kouchans,—MDAFA, t. XIII, le Caire, 1946, *նույնի՝* Le problème de la chronologie des Kouchans,—„Cahiers de l'histoire mondiale", vol. 3, Neuchâtel, 1957. № 3, *էջ 689—722*։

[8] R. Göbl, Die Münzprägung der kušān von Vima Kadphises bis Bahram IV, F. Altheim, R. Stiehl, Finanzgeschichte der SpātantiRe, Frankfurt am Main, 1957, *էջ 173—256*։

[9] *Չինական ժամանակագրությունում հիշատակվող Կիոցզյուկուն համապատասխանում է դրամներից հայտնի, քուշանական թագավոր Կուշուլու Կադֆիս Ա-ին, որը, ըստ պատմագրության մեջ ընդունված տեսակետի՝ սկսել է իշխել մ. թ. ա. I դ. կեսերին* (Б. Г. Гафуров, *նշվ. աշխ., էջ 142*)։

[10] *Անսյին համապատասխանում է Պարսկաստանին, Գաոֆուն կամ Կաոֆուն՝ Քաբուլին, Պուդուն ըստ Մարկվարտի՝ Պակտիան է (նույն տեղում)*։

[11] *Գիբինը գտնվում է Հնդկաստանի հյուսիս-արևմտյան մասում՝ Քաշմիրի և Գանդհարայի սահմանների մոտ* (В. М. Массон, В. А. Ромодин, История Афганистана, т. 1, М., 1964, стр. 161).

[12] Н. Я. Бичурин, Собрание сведений о народах, обитавших в средней Азии в древние времена, М.—Л., 1950, т. 11, стр. 227.

նորդ), այնպես էլ «մեծ թագավոր», «թագավորների թագավոր» տիտղոսները[13]։ Նրա հաջորդ Կադֆիս Բ-ի ժամանակ քուշաններին հաջողվում է գրավել Հյուսիսային Հնդկաստանը՝ Քաշմիր քաղաքով։ Կադֆիս Բ-ն արդեն հորջորջվում էր «թագավորների թագավոր, աշխարհի տիրակալ, փրկիչ»։ Կադֆիս Ա-ի և Բ-ի գործունեությունները հիմնականում կապվում են Միջին Ասիայի հետ և պատմագրության մեջ այդ ժամանակաշրջանը կոչվում է վաղ քուշանական (մ. թ. ա. I և մ. թ. II դդ.)։ Քուշանական թագավորության երկրորդ շրջանը կապվում է Կանիշկայի և նրա հաջորդների գործունեության հետ, որոնց ժամանակ քուշանների քաղաքական կենտրոնը տեղափոխվում է հյուսիս-արևմտյան Հնդկաստան՝ Փեշավեր։

Քուշանական պետության անկումը սկսվում է մ. թ. III դ. Սասանյան Պարսկաստանի հետ ունեցած ռազմական ընդհարումների հետևանքով։ Սասանյաններից Արտաշիր Ա Պապականը (224—242), այնուհետև Շապուհ Ա-ն (242—272) քուշաններից գրավեցին Սիստանը, Մերվը, Բալխը, Խորեզմը՝ մինչև Խորասանի սահմանները, այսինքն՝ նախկին Պարթևական թագավորության ամենածայրամասային շրջանները[14]։

Սասանյան Շապուհ Բ թագավորի և քուշանների ընդհարման երկու հետաքրքրական փաստ պահպանվել է Փավստոս Բուզանդի մոտ։ Նա գրում է. «...Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի արշակունին թագաւորն Քուշանաց, որ նստէր ի Բաղխ քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ սասանականին Շապհու և թագաւորին Պարսից։ Եւ Շապուհ թագաւորն զամ զզօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զորս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն Հայոց զամ այրևձի գումարեալ՝ խաղացոյց ընդ ինքեան. և զներքինին անգամ թագաւորին Հայոց Արշակայ տանէր ընդ ինքեան ի գործ պատերազմին»։ «...Իսկ իբրև եղև պատերազմ ընդ թագաւորին Քուշանաց և ընդ թագաւորին Պարսից, շարաշար տարածէին զզօրսն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս կոտորեցին ի զօրացն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս ձերբակալ արարին, և զկէս փախստականս հալածական առնէին»[15]։

«...Քանզի զայն ժամանակաւ թագաւորին Պարսից սասանականին տուեալ էր պատերազմ ընդ մեծ թագաւորին Քուշանայ ընդ արշակունոյն, որ նստէր ի Բաղհ քաղաքին։ ...Եւ իբրև եղեն խառնորդք երկոցունց գնդացն ընդ միմեանս, ապա ի պարտութի մատնեցան զօրքն Պարսից յերեսաց զօրացն Քուշանաց. դարձան ի փախուստ անհնարին հարուածովք, հասին ի վերայ զօրացն Պարսից. զի ոչ մի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին ի զօրացն Պարսից, բանբեր անգամ ոչ ապրէր»[16]։

Ինչպես հասկանալ Բուզանդի այս վկայությունները։ Վերը մենք նշեցինք, որ քուշանական թագավորությունը այնքան էր թուլացել, որ նրա տարածքների մեծ մասը, այդ թվում և Բակտրիան, գտնվում էր Սասանյան Պարսկաստանի գերիշխանության տակ, իսկ Բալխի Սասանյան փոխարքան նույնիսկ կրում էր «Քուշան-շահ» տիտղոսը։ Հետևաբար, դժվար է հավատալ, որ քու-

---

13 Б. Г. Гафуров, նշվ. աշխ., էջ 148։

14 В. Г. Луконин, Завоевание Сасанидов на Востоке и проблема кушанской абсолютной хронологии («Вестник древней истории») (այսուհետև՝ ВДИ), 1969, № 2).

15 «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն հայոց», Վենետիկ, 1832, էջ 205—206։

16 Նույն տեղում, էջ 239։

շանները պարտության մատնելով պարսիկներին, նրանց զորքը այնպես են ոչնչացրել, որ անգամ բանբեր չի մնացել։ Տրեվերի համոզմամբ՝ Բուզանդի հիշյալ վկայությունները վերաբերում են քուշանների հարևան հոներին, որոնք այդ նույն ժամանակաշրջանում Սիր-Դարիայի հակառակ ափերից ներխուժելով Միջին Ասիա, հաջողությամբ կռվում էին պարսիկների դեմ[17]։ Իսկ Բուզանդը, ըստ ավանդության, հոներին շարունակում էր անվանել քուշաններ։ Իր կարծիքը հաստատելու համար Տրեվերը վկայակոչում է Ամմիանոս Մարկելլինոսին, որը հավաստում է, թե իր տիրույթների ծայրամասերում Շապուհ Բ-ն արյունահեղ պատերազմներ էր մղում հոների և եուսենների դեմ[18] Շապուհ Բ-ին հաջողվում է դաշինք կնքել հոների հետ, իսկ 359 թ. հոների թագավոր Գրումբաթը, Ամիդ քաղաքի պաշարման ժամանակ, հանդես է գալիս որպես Սասանյանների դաշնակից[19]։ Կ. Վ. Տրեվերի այս բացատրությունը ենթակա է վերանայման։

Մեր կարծիքով, շատ հետաքրքրական է չինական ժամանակագրության մի վկայությունը, ուր խոսվում է քուշանական թագավորների հետնորդների՝ կիդարիտների քաղաքական գործունեության մասին։ Ըստ այդ վկայության, «Ցոսե-Չժի խիզախ թագավոր Ցիդոլոն իր զորքով անցնում է մեծ լեռներով, հարձակվում Հյուսիսային Հնդկաստանի վրա և իրեն ենթարկում հինգ իշխողների, որոնք ընկած էին Գանտոլոյից (Գանդհարայից) սկսած դեպի Հյուսիս»[20]։ Այնուհետև, նույն վկայությունից տեղեկանում ենք, որ Ցիդոլոն իր մայրաքաղաքը «Ցունլանշիից տեղափոխել է Բոլո»։

Այսպիսով, պարզվում է, որ քուշանների մի նոր թագավոր, որի անունը Կիդար էր (Ցիդոլոն՝ Կիդարի չինական անվանումն է), Հնդկաստանում հասել էր քաղաքական լուրջ հաջողությունների, նրան, հավանաբար, հաջողվել էր պարսիկներից ետ խլել նաև Բակտրիան, որովհետև Գուտշմիդտը, ապա Նյոլդեկեն Բոլոն նույնացրել են Բալխի հետ[21]։ Դրամագետները[22] Կիդար-Ցիդոլոյի դրամները թվագրում են մ. թ. IV դ. կեսերով։ Պատմագրության մեջ կիդարների սահմանային այս միությունը հայտնի է որպես «կրտսեր քուշանների» թագավորություն[23]։ Հիշյալ վկայությունների հիման վրա հնարավոր է եզրակացնել, որ թուլացած քուշանական թագավորությունը IV դ. կեսերին որոշակի վերելք է ապրել և Միջին Ասիայի հոների հետ համատեղ գոյություն են ունեցել նաև հին քուշանների ժառանգները։ Կարծում ենք, Փավստոս Բուզանդի վկայությունները վերաբերում են հենց այս կրտսեր քուշաններին։

Բուզանդը քուշանների թագավորին անվանում է «քուշանների մեծ թագավոր»։ Այս վկայությունը հաստատվում է Հնդկաստանում գտնված մի

---

17 Կ. Վ. Тревер, նշվ. աշխ., էջ 134։

18 Аммиан Марцеллин, История, пер. с латин. Ю. Кулаковского и А. Сонни, вып. 1—3, Киев, 1906—1908, XIV, 3, 1, XVI, 9, 3—4 (в дальнейшем Аммиан Марцеллин).

19 Аммиан Марцеллин, XVII, 5, 1, XIX, 1։ Հ. Մարկվարտը այն կարծիքին է, որ Ամմիանոս Մարկելլինոսի մոտ հիշատակվող եուսեններ բառի «ես»-ն պետք է կարդալ «կ»։ Այսինքն պետք է լինի եուսեն-կուսեն-քուշեն։ Եթե ուղղումը ճիշտ է, ուրեմն հոները հանդես են գալիս քուշանների փոխարեն կամ նրանց հետ միասին։

20 Н. Я. Бичурин, նշվ. աշխ., էջ 264։

21 В. М. Массон, В. А. Ромодин, նշվ. աշխ., էջ 167, ծան. 34։

22 M. F. C. Martin, Coins of Kidara and the Little Kushans, „Journal of the Royal Asiatic Society of Bengal", Calcutta, 1937, vol. III, էջ 23—30։

23 В. М. Массон, В. А. Ромодин, նշվ. աշխ., էջ 168։

արձանագրությամբ, որը վերծանել և թվագրել է հնդիկ գիտնական Բուդհա Պրակաշը։ Վերջինիս կարծիքով՝ արձանագրությունը պատկանում է IV դ. կեսերին։ Ա. Ալտեկարան ցույց է տվել, որ այդ արձանագրության մեջ խոսք վերաբերում է կիդարներին, որոնց թագավորն ուներ «թագավորների-թագավոր» տիտղոսը[24]։ Այս տիտղոսը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ կիդարներին ենթարկվում էին ուրիշ շատ թագավորներ կամ ցեղեր։

Այնուհետև, ինչպես տեսանք, Բուզանդը բազմիցս կրկնում է, որ քուշանների մայրաքաղաքը Բալխն էր։ Այս վկայությունը տարակարծությունների առիթ է տվել, բայց եթե ընդունում ենք, որ Բուզանդը նկատի ունի հոն-կիդարներին, ապա, իսկապես, չինական ժամանակագրության մեջ հիշատակվող Բոլոն նույն Բալխն էր։ Բուզանդի վկայությունները մեկ անգամ ևս հաստատում են այն կարծիքը, որ IV դ. 70-ական թվականներին կիդարները պարսիկներից ետ խլելով Բակտրիան, իրենց մայրաքաղաքը կրկին դարձրել էին Բալխը։ Վերջապես, Բուզանդը պատմական նոր միավորումը շարունակում է անվանել քուշանական։ Դրա մեկնությունն այն է, որ փոխվել էր միայն իշխող վերնախավը, բայց մնացել էր պատմական նույն տարածքը, նույն ազգաբնակչությունը։ Ժամանակակիցները հոներին կամ կիդարներին քիչ էին տարբերում քուշաններից, քանի որ դրանք էթնիկական նույն խմբին պատկանող ժողովուրդներ էին։ Քուշանների և հոների էթնիկական կապի մասին թույլ արձագանքներ են պահպանվել արաբ պատմիչներ Տաբարիի և ադ-Դինավարիի երկերում՝ կապված Սասանյան թագավոր Վռամ-Բահրամ Գուրի (420—437) գործունեության հետ։ Վերջինս, ըստ հիշյալ պատմիչների վկայությունների՝ պայքարում էր հոների դեմ[25]։

Մեր եզրակացությունները հաստատվում են Եղիշեի վկայությամբ, որն ուղղակի գրում է. Հազկերտը «խաղաց գնաց միանգամայն ի վերայ տէրութեան Հոնաց աշխարհին, զոր Քուշանս անուանեն»[26]։ Իսկ բյուզանդական պատմիչ Պրիսկոսը[27] (πρίσκος) հոների մասին խոսելիս նրանց ուղղակի անվանում է կիդարներ, որոնք ազգակից էին քուշաններին։

Վերջապես, վերը նշված երկու հատվածում էլ Բուզանդը քուշանների թագավորին անվանում է Արշակունի «զի Արշակունին թագաւորն քուշանաց», «թագաւորին քուշանաց ընդ Արշակունոցն»։ Քուշանների Արշակունյան ծագման մասին վկայություններ, որքան մեզ հայտնի է, պահպանվել են միայն հայկական սկզբնաղբյուրներում։ Մովսես Խորենացին գրում է, որ հայոց թագավորը վրեժխնդիր լինելով պարթևական Արտավան թագավորի մահվան համար, ասպատակում է Պարսից և ասորեստանցիների երկիրը։ Նա պատգամավորներ է ուղարկում «յիւր բնիկ աշխարհն, ի կողմանս Քուշանաց, զի իւր տոհմայինքն ի թիկունս հասցեն, և Արտաշրի ընդդէմ կացցեն»[28]։ Ուշադրության արժանի է «տոհմայինքն» արտահայտությունը, որով Խորենացին որակում է Խոսրովին։ Ստրաբոնը Արշակ Մեծի մասին գրում է, որ նա ծագումով սկյութացի էր և որ տիրելով պարներին, որոնք թափառում էին Օխա գետի

---

24 Б. Г. Гафуров, նշվ. աշխ., էջ 196։

25 Նույն տեղում, էջ 197։

26 «Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 11։

27 «Сказания Приска Паннийского», пер. Г. С. Дестуниса («Ученые записки II отд. АН», кн. 7, вып. 1. СПб, 1861, стр. 19, 25).

28 «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 202։

հովտում, գրավեց Պարթևստանը և իրեն ենթարկեց նրանց։ Շատերը Արշակին անվանում էին բակտրիացի, որը, ցանկանալով թոթափել Դիոդոտի իշխանությունը, Պարթևստանը ապստամբեցրեց[29]։ Սեբեոսը նույնպես Արշակ Մեծին անվանում է թետալացիների թագավորի որդի. «...եւ թագաւորեաց Արշակ Մեծ, որդի արքային Թէտալացւոց ի Բահլ Շահաստանի յերկիրն Քուշանաց, որում ամենայն ազգք արևելից և հիւսիսոյ հնազանդեցան ի ծառայութիւն»[30]։

Այս վկայությունները հիմք են տալիս կարծելու, որ Արշակունիների նախնիները՝ դահերը կամ բակտրիացիներն, ունեն միջինասիական ծագում, իսկ նրա մի ճյուղը՝ Կարենի[31] պահլավը, շարունակում էր գտնվել քուշանների երկրում։

Խորենացու վկայությամբ, Խոսրով թագավորն առաջին անգամ անպատասխան մնալով, երկրորդ անգամ է մարդ ուղարկում քուշանների երկիր՝ բուն Բահլ քաղաքը, իր ցեղակիցների՝ պարթևների և պահլավիկների մոտ, նրանց օգնությամբ Սասանյան Արտաշիրից վրեժ լուծելու համար։ Կարենի պահլավ ցեղից միայն Վեհսաճան անունով մեկն է պատրաստակամություն ցուցաբերում, իսկ մյուսները՝ Սուրենի պահլավը և Ասպահապետի պահլավը, անցնում են Արտաշիրի կողմը։ Վեհսաճանը տեղ չի հասնում, որովհետև Արտաշիրը հետապնդում և ճանապարհին ոչնչացնում է նրան ու նրա ցեղակիցներին։ Փրկվում է Բուրզ անունով մի երեխա, որին փախցնելով հասցնում են Քուշանների երկիրը[32]։

V դ. կեսերին Միջին Ասիայում քաղաքական ասպարեզ են ելնում թետալացիները, որոնց աղբյուրները երբեմն շփոթում են հոների հետ։ Թետալացիները նույն հոնական ցեղերի ներկայացուցիչներն էին։ Հայկական սկզբնաղբյուրներում նույնպես քուշանների, հոների անվան կողքին տպում է հանդես գալ թետալացի անունը։ Հատկապես հետաքրքիր է Եղիշեի Պատմությունը, ուր նկարագրվում է Հազկերտ թագավորի արշավանքները քուշանների վրա։ Նա ասում է, որ մոգերը համոզում էին Հազկերտ թագավորին զորք հավաքել և հարձակվել քուշանների երկրի վրա։ Հաղթանակի դեպքում պարսիկների հեղինակությունը կբարձրանար այն աստիճան, որ անգամ հույները (բյուզանդացիները) այլևս չէին համարձակվի նեղել պարսիկներին։ Պետք է ենթադրել։ որ հոները բավականաչափ ուժեղ էին, որպեսզի նրանց պարտությունը դրական ազդեցություն ունենար պարսկա-բյուզանդական հարաբերությունների վրա. «Ասեն մոգքն. «Արքայ քաջ, աստուածքն ետուն քեզ զտէրութիւնդ և զյաղթութիւն, և ոչ ինչ կարօտ են նոքա մարմնաւոր մեծութեան, բայց եթէ ի մի օրէնս դարձուցանես զամենայն ազգս և ազինս, որ են ի տէրութեան քում. յայնժամ և աշխարհն ՅՈՒՆաց հնազանդեալ մտցէ ընդ օրինօք քովք։ Արդ զմի բան զմեր վաղվաղակի կատարեա դու, արքայ. զօր գումարեա և գունդ կազմեա. խաղա գնա յերկիրն Քուշանաց. և զամենայն

---

29 Strabonis, Geographica. Lipsiae, 1915—1925, XI, 9, 2.

30 «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 8։

31 Տաբարիի աշխատության էջերում բազմիցս հանդիպում ենք Կարեն անվանը, Նոլդեկեն իր աշխատության ծանոթագրություններում այն անվանում է ցեղանուն (Th. Nöldeke, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, Tabari, Leyden, 1879. էջ 127, ծան. 2, էջ 128, ծան. 4)։

32 Խորենացի, էջ 208—209։

ազգս հաւաքեա և անցո ըստ Պահ դուռն ի ներքս... և տիրես դու և երկրին Քուշանաց, և Յոյնք իսկ ոչ ելանեն ընդ քո իշխանութիւնդ»[33]։

Հազկերտի հրովարտակով զորքը հավաքվում է Ապար[34] աշխարհում և դնում է հոնաց աշխարհի վրա, որոնց անվանում էին քուշաններ։ Մոտ երկու տարի տևող պայքարն ավարտվում է պարսիկների թեթևակի հաջողությամբ։ Նշված իրադարձությունները, ըստ Եղիշեի, տեղի են ունենում «...սկսեալ ի չորրորդ ամէ տէրութեանն իւրոյ մինչև յամն մետասաներորդ թագաւորութեանն»[35]։

Իր աշխատության երկրորդ գլխում Եղիշեն քուշաններին այլևս հոներ չի անվանում։ Հազկերտ II-ը իր թագավորության տասներկուերորդ տարում (450 թ.) հարձակվում է թեթալական երկրի վրա. «Արդ ի սկզբան երկոտասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ գունդ կազմէր անհամար բազմութեամբ, յարձակեալ հասանէր յերկիրն Իտալական։ Զայս տեսեալ թագաւորին Քուշանաց՝ ոչ հանդուրժէր ելանել ընդ առաջ նորա պատերազմաւ. այլ խոյս տուեալ ի կողմանս ամուր անապատին, թագստեամբ ապրէր հանդերձ ամենայն զօրօքն իւրովք։ Իսկ սա ապատակ արձակէր գաւառաց, տեղեաց, վայրաց. առնոյր զբազում բերդս և զքաղաքս, և կուտէր զգերին, զառ և զապուռ և զաւար, ածէր հասուցանէր յերկիր իւրոյ տէրութեանն»[36]։

Հազկերտ թագավորի առաջին արշավանքից անցել էր ընդամենը ութ տարի, և ահա Եղիշեն նրա թշնամիներին անվանում է թեթալացի, նրանց երկիրը՝ թեթալական։ Տրեվերը հենվելով այն փաստի վրա, որ քուշանների թագավորը առանց մարտն ընդունելու փախել է անապատի կողմերը, իսկ պարսիկները ասպատակելով գրավել են բազմաթիվ բերդեր ու քաղաքներ, եզրակացնում է, որ թեթալացիների գերիշխանությունը հոների վրա դեռևս վերջնական չէր[37]։

Պատմագրությանը անհայտ է, թե թեթալացիները երբ են անցել իշխանության գլուխ։ Այդ կապակցությամբ կարելի է բերել մի շարք վկայություններ. այսպես, 437 թ., երբ չինական դեսպանությունը ժամանում է «Արևմտյան երկիր», դեռևս անկախություն էին վայելում Տուրֆանեն, Սոդդը, Տաշքենտը, Ֆերգանան, Թոխարիստանը և այլն։ Իսկ չինական ժամանակագիրները շարունակում են այդ երկիրը կոչել Յոսե-Ջժի։ Ենոքին[38] այս փաստից ելնելով եզրակացնում է, որ 437 թ. թեթալական միությունը տակավին գոյություն չուներ։

V դ. իրադարձությունները նկարագրելիս ասորական ժամանակագիր

---

33 Եղիշե, էջ 9։

34 Հին պարսկական ձևը Ապարշահրն է, որ նշանակում է Վերին աշխարհ։ Այն այսօրվա Խորասանն է։ Ապար աշխարհի գլխավոր քաղաքը Շապուհ I-ի կառուցած Նյուշապուհն էր։

35 Եղիշե, էջ 12։ Հազկերտ II-ի թագավորության չորրորդ տարվանից մինչև տասնմեկերորդ տարին կլինի 442—449 թթ.։ Հազկերտը գահակալել է 438—457 թթ.։

36 Նույն տեղում, էջ 18։

37 К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 137։

38 Չինական ժամանակագիրների համապատասխան վկայությունների վերլուծությունը տե՛ս K. Enoki, On the nationality of the Ephthalites „Memoirs of the Research department of the Toyo Bunko", Tokyo, 1959, № 18, էջ 1—13։

Հեսու Սյունակյացը[39], բյուզանդական պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին[40] թեթալացիներին շարունակում են անվանել հոներ։

Լ. Գումիլյովը[41], մանրամասն ուսումնասիրելով թեթալացիների մասին գոյություն ունեցող սկզբնաղբյուրները, հանգել է այն եզրակացության, որ թեթալացիները ձևավորվել են V դ. կեսերին։ Դրանք Բադաշխանի շրջանում թափառող ցեղեր էին, որոնք փոխարինեցին հոներին։ Չինական ժամանակագիրները[42] նույնպես նրանց անվանում են քոչվոր վաչկատուն ցեղեր, որոնք ծագել են Յուե-Չժիից։

Ավելի ուշ՝ 453—454 թթ. Հազկերտ II թագավորը թեթալացիներին իրեն ենթարկելու մի նոր փորձ է կատարում։ Թեթալացիները դիմադրում են պարսիկներին և պարտության մատնում. «...զօր ժողովէր զունգ կազմէր, ելանել նմա ընդ առաջ հզօր ձեռամբ։ Չի թէպէտ և ոչ կարէր յանդիման տալ պատերազմ ընդդէմ նորա, այլ ի վերջի թեւոյն անկեալ՝ բազում հարուածս հասուցանէր ի վերայ զօրացն արքունի։ Եւ այնպէս նեղեալ շտապէր, զի անձուկ լաշկարաւ վատախտարակ արարեալ՝ այսրէն դարձուցանէր, և ասպատակաւ զհետ մտեալ աւերէր զբազում գաւառս արքունի, և ինքն ողջանդամ անդրէն յերկիրն իւր դառնայր»[43]։

Եղիշեն, ցավոք, ոչ մի տեղանուն չի հիշատակում, որը հնարավորություն տար որոշելու, թե ռազմական գործողությունների հետևանքով ի՞նչ շրջաններ գրավեցին թեթալացիները։ Այսուհանդերձ, Տրեվերը կարծում է, որ վերոհիշյալ իրադարձությունները տեղի են ունեցել մոտավորապես Նիշապուրի, Բալխի և Բուխարայի շրջաններում[44]։ Եղիշեի մոտ որևէ վկայություն չկա նաև թեթալացիների կրոնական հավատալիքների մասին։ Բայց այն փաստը, որ Հազկերտ II-ը մոգերի թելադրանքով էր պատերազմի ելնում քուշանների դեմ, արդեն վկայում է, որ վերջիններիս կրոնը ընդհանուր ոչինչ չունի զրադաշտականի հետ։ Այս առումով հետաքրքրական է հոների թագավոր Գրումբատի որդու թաղման մասին Ամմիանոս Մարկելլինոսի[45] նկարագիրը։ Ռազմի դաշտում ընկած թագավորի երիտասարդ որդու մահվան կապակցությամբ տասը օր դադարում են ռազմական գործողությունները։ Սգո արարողությունը ուղեկցվում է թաղման երգերով, լաց ու կոծով։ Հանգուցյալի մարմինը դիակիզում են և աճյունասափորը տեղափոխում հայրենիք։ Թաղման այս ծեսը, իրոք, ոչ մի ընդհանուր բան չունի զրադաշտականության հետ։ Այն ավելի բուդդայական է։

Սասանյան Պարսկաստանի և թեթալացիների պայքարը հատկապես սրվում է Պերոզ թագավորի իշխանության տարիներին (459—487)։ Սա թեև պարտավորվել էր չխախտել պարսիկների ու թեթալացիների միջև հաստատված այն սահմանը, որ գոյություն ուներ դեռևս Վահրամ Գուրի ժամանակ-

---

39 Н. В. Пигулевская, Сирийские источники..., էջ 53։

40 Պրոկոպիոս Կեսարացի, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, էջ 4։

41 Л. Н. Гумилев, Эфталиты и их соседи IV в., ВДИ, 1959, № 1,

42 K. Enoki, նշվ. աշխ., էջ 1—13։

43 Եղիշե, էջ 142։

44 К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 137։

45 Аммиан Марцеллин, XIX, 1, 2.

ներից[46], բայց հավատարմության այդ երդումը երկար չի տևում։ Նա հարձակվում է Թեսալական երկրի վրա։ Այդ ընդհարումների մասին հետաքրքրական նյութեր են պահպանվել Ղազար Փարպեցու մոտ։ Նա գրում է. «Լքեալ և սրտաբեկեալ ամենայն մարդ՝ տեսանել լոկ սիրով չկարէր զայրն Հեփթաղ և կամ զանունն լոկ լսել, թող թէ կռուով ընդդէմ Հեփթաղի երթալ և կամ յայտնի ելանել, յիշելով զահ և զպաշարումն, զոր անցին ընդ տէրն Արեաց և ընդ Պարսիկս։ Եւ յայտնի աղաղակէր ամենայն քերան. «Եթէ մահապարտ եմք, և արքայից արքայ զմեզ սպանանել կամի՝ ինքն իսկ ատտէն տուր ի վերայ եղեալ հրամայեսցէ սպանանել, քան եթէ սրով հեփթաղին տայ կորուսանել զԱրիս որ գործ մինչև ցյաւիտեանս զանձն և զԱրեաց աշխարհ վատանուն առնէ»[47]։

Հեփթաղների թագավորը ցանկանալով Պերոզին սթափեցնել, ուղերձ է ուղարկում նրան, հիշեցնելով անցյալ պարտությունները և իրենց երկրների միջև կնքված շհարձակման դաշինքները. «Քո ընդ իս ուխտ է երդմամբ, գրով և կնքով, թէ չկռուիմ ընդ քեզ. և սահմանս կարգեցաք, զորովք չիշխեսցուք թշնամութեամբ անցանել առ միմեանս. արդ՝ յիշեա զուխտն և զնեղութեան պաշարումն, յորմանէ ողորմեալ իմ արձակեցի զքեզ, և ոչ տպանի, և ի բաց դարձիր խաղաղութեամբ, և մի մեռանիր. ապա թէ ոչ լսես բանից իմոց՝ գիտա, զի կորուսանեմ զքեզ և զամենայն զանպիտան բազմութիւնդ, յոր դու յուսացեալ ես։ Քանզի ես և արդարութիւն ուխտապահութեան ի միասին կռուիմք, և դու և ուխտաղանցութեանն ստութիւն ի միասին էք. և արդ՝ դու ինձ զի՞արդ կարես յաղթել»[48]։ Այս վկայությունը նույնպես համապատասխանում է իրականությանը։ Ասորի ժամանակագիր Հեսու Սյունակյացը գրում է. «Նա (Պերոզը—Ժ. Է.) որպես երաշխավոր և պատանդ թողեց Կավատին՝ իր որդուն, և երկրորդ անգամ կնքեց շհարձակման պայմանագիր»[49]։

484 թ. Պերոզի արշավանքը անփառունակ վախճան ունեցավ ինչպես իր, այնպես էլ Պարսկաստանի համար, որը հարկատու դարձավ հեփթաղներին. «Վասն զի որ այժմ Արեաց տէրն է ամենայն աւագանին՝ զայդ ևեթ խոսին հանապազ, և անմխիթար ողբան և տրտմին, յիշելով զՊերոզի զանհաւան և զամբարհաւաճ զբարսն, զոր ոչ ունէր նման մարդոյ, այլ նման շար և վայրենի գազանի։ Որ կորոյս զինքն և զամենայն Արեաց աշխարհի զոյժ և զզօրութիւն, և զթագաւորութիւն մի մեծ և զազատ ի ծառայութիւն ետ Հեփթաղին. յորմէ ի դառն ծառայութենէ, մինչ կենդանի է Արեաց աշխարհն՝ զերծանել ոչ կարէ»[50]։

Պարսիկների հարկատու դառնալը հեփթաղներին վկայում է նաև Պրոկոպիոս Կեսարացին. «Այսպես ուրեմն, Պերոզը և պարսիկների ամբողջ զորքը ոչնչացվեց... Այն ժամանակներից սկսած պարսիկները հարկատու դարձան հեփթաղներին, մինչև Կավադը հզորացավ և դադարեց վճարել տարեկան հարկը։ Այդ բարբարոսները պարսիկների վրա տիրեցին երկու տարի»[51]։

---

46 А. Э. Шмидт, Материалы по истории Средней Азии и Ирана («Ученые записки Института востоковедения АН», М.—Л., 1958, XVI, стр. 448).

47 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1907, էջ 341։

48 Նույն տեղում, էջ 342։

49 Н. В. Пигулевская, նշվ. աշխ., II, § 10։

50 Փարպեցի, էջ 366։

51 Պրոկոպիոս Կեսարացի, էջ 9 (բնագրում՝ նեֆքաղ)։

Տարարին[52], խոսելով Պերոզի արշավանքների մասին, նույնիսկ հիշատակում է հեփթաղների թագավորի՝ Ախշունվարի, անունը։ Բոլոր սկզբնաղբյուրներն էլ համերաշխ են հատկապես Պերոզի սպանության նկարագրության հարցում։ Նրանք պատմում են, որ Պերոզը իր ընտանիքի անդամներով ընկել է այն թակարդ-փոսը, որ պատրաստել էին հեփթաղները։ Պրոկոպիոսն անգամ գրում է, որ հեփթաղների թագավորն իր դրոշի ծայրին կախել էր այն աղը, որով նախապես երգվել էր Պերոզը[53]։

Ղազար Փարպեցու այն վկայությունը, թե պարսիկները խախտելով պայմանագիրը, հարձակվել էին հեփթաղների վրա, նույնպես հաստատվում է Պրոկոպիոսի միջոցով, որը գրում է, թե «սրանք (հեփթաղները) ղեկավարվում են թագավորի կողմից, օրինական պետություն ունեն, միմյանց, ինչպես և հարևանների հետ վարվում են օրինավոր և արդար կերպով, ոչ պակաս, քան հռոմայեցիները և մնացած բոլոր (ժողովուրդները)»[54]։

Սեբեոսի աշխատությունը հիմնականում նվիրված է VII դ. իրադարձություններին։ Այստեղ նա անդրադառնում է նաև ավելի վաղ ժամանակներին. խոսելով Պերոզի թշնամիների մասին՝ նրանց անվանում է քուշաններ[55], թեատալացի է անվանում ավելի ուշ՝ VII դ. երկրորդ կեսի իրադարձությունների կապակցությամբ, երբ կազմավորվել ու ծաղկման էր հասել թուրքական խականությունը, որը հիմնադրվել է Միջին Ասիայի սահմաններից շատ հեռու՝ Ալթայում և մեծ դեր է կատարել թեատալական պետության անկման գործում։ Թուրքերի տարածքային ընդարձակումը կապված էր Մուխան խականի անվան հետ։ 551 թ. թուրքերը հասնում են «Արևմտյան ծով», հավանաբար Արալյան լիճը։ VI դ. կեսերին թեատալական պետությունը գտնվում էր մի կողմից Պարսկաստանի (որը, Խոսրով Ա Անուշիրվանի ժամանակ ուժեղանալով, դադարել էր հարկ վճարել թեատալացիներին), մյուս կողմից՝ թուրքական խականության անընդհատ հարվածների վտանգի տակ[56]։

Հասունանում է թուրք-տասանյան ռազմական կոնֆլիկտը։ Թուրքական խականության ղեկավարները, Պարսկաստանի հնադույն թշնամի Բյուզանդիայի հետ դաշնակցած, նրա դեմ կնքում են ռազմական պայմանագիր։ Թուրքերն իրենց զավթողական քաղաքականությունն ուժեղացրին հատկապես Խոսրով Ա Անուշիրվանի մահից հետո՝ իրենց առաջին հարվածներն ուղղելով Թոխարիստանում պահպանվող թեատալական պետության դեմ։ Թեատալացիները ստիպված էին ընդգրկվել թուրքական բազմաբեղու քոչվորական ցեղերի կազմում։

---

52 А. Э. Шмидт, նշվ. աշխ., էջ 449։

53 Պրոկոպիոս Կեսարացի, էջ 7։ Աղով երդվելու մասին վկայություններ պահպանվել են նաև հայկական սկզբնաղբյուրներում «Եւ նա ետ բերել՝ ըստ օրինացն հաստատիմ երդմանց թագաւորութեն Պարսից՝ աղ, կնքել վարազ նկարագիր մատանեաւ, և յղեաց» (Փավստոս Բուզանդ, էջ 164), «Եւ տայ տանել նմա երդումն աղ կնքել և տանել ընդ հրովարտակին» (Սեբեոս, էջ 97), կամ «...արա վասն նորա հաստատութիւն գրով և կնքով և ազիւ» (նույն տեղում, էջ 99)։

54 Պրոկոպիոս Կեսարացի, էջ 4։

55 Սեբեոս, էջ 26։

56 М. М. Дьяконов, Очерки истории древнего Ирана, М., 1961, стр. 309—315, 321; Н. В. Пигулевская, Византия и Иран за рубежом VI—VII вв., М.—Л., 1946, стр. 82—83.

Պարսկական պետության արևելյան նահանգների իշխան Վահրամ Չուբինը (Մերհեվանդակը) պատասխան արշավի է ելնում թուրքերի դեմ և հասնում է հաջողության։ Սեբեոսը, որ այդ իրադարձությունների ժամանակակիցն էր, գրում է. «Եւ եղև ի ժամանակին յայնոսիկ Վահրամ ոմն Մերհեւանդակ, իշխան արևելից կողմանց աշխարհին Պարսից, որ հարկանէր քաջութեամբ իւրով զզաւրս Թեստալացւոց և բռնութեամբ ունէր զԲահլ և զամենայն երկիրն Քուշանաց՝ մինչև յայնկոյս գետոյն մեծի, որ կոչի Վեհռոտ, և մինչև ցտեղին, որ կոչի Կազբիոն»[57]։ Մարկվարտը[58] Կազբիոնը նույնացնում է թեստալական քաղաք Պայկենտի հետ, Տրեվերը[59] հավանական է համարում Չուբինի հասնելը մինչև, այսպես կոչված, «երկաթյա դռները», որը գտնվում է Թոխարիստանի և Սոդդի սահմաններում։ Այդ առումով ուշագրավ են Սեբեոսի օգտագործած արտահայտությունները՝ «թեստալացիների զորք», բայց «քուշանների երկիր»։ Այնուհետև, Վահրամ Չուբինը պատերազմում է «...ընդ մեծի արքային Մազքթաց, որ էր իր կողմանն յայնմիկ, յայնկոյս գետոյն մեծի՝ եհար զբազմութիւն զաւրացն, և սպան զթագաւորն ի պատերազմի. և ըմբռնեալ յափշտակեաց զամենայն զգանձս թագաւորութեանն այնորիկ»[60]։

Մարկվարտը և Պիգուլևսկայան, ինչպես նաև Տրեվերը այն կարծիքին են, որ Սեբեոսը այս հատվածում Վահրամ Չուբինի հակառակորդներին սխալմամբ է մազքութներ անվանում, որ դրանք թուրքերն էին, իսկ տեղի ունեցած պատերազմը՝ 588 թ. թուրք-պարսկական ընդհարումը։ Այս տեսակետը, մեր կարծիքով, միանգամայն անընդունելի է, որովհետև մազքութները նույն մասսագետներն էին, որոնք բնակվում էին Ամու-Դարյա գետի ափերին։ Հայկական սկզբնաղբյուրներում Ամու-Դարյան հիշատակվում է իբրև «Մեծ գետ», Վեհռոտ անունով։ Այս մազքութներն ավելի ուշ հասել էին մինչև Անդրկովկաս, թափառում էին Կասպից ծովի ափերին, մինչև Ճորա կոչվող ամրոցը։ Վահրամ Չուբինը տվյալ դեպքում պատերազմում էր միջին ասիական ծագում ունեցող այն ցեղերի դեմ, որոնք թափառում էին այժմյան Ուզբեկստանի հյուսիսում գտնվող տափաստաններում։ Հայերի մոտ այդ ժողովուրդները կոչվում էին մազքութներ։

Վահրամ Չուբինը, կարճ ժամանակ անց, ապստամբում է Խոսրով թագավորի դեմ և գրավում Տիզբոնը՝ ստիպելով Խոսրովին փախչել։ Չուբինի իշխանությունը, սակայն, կարճատև էր։ Խոսրովը բյուզանդացիների օգնությամբ 591 թ. ետ է խլում իշխանությունը։ Սակայն 591—602 թթ. միջև ընկած ժամանակահատվածում Խոսրովի դեմ ապստամբում է Խորասանի կառավարիչ Վստամը և խլում իշխանությունը։ Սեբեոսը վկայում է, որ այս Վստամը իրեն է ենթարկել քուշանների երկու թագավորներին՝ Շավգին և Պարիոկին[61]։

---

57 Սեբեոս, էջ 33։

58 J. Marquart, նշվ. աշխ., էջ 83։

59 Կ. Ֆ. Տրեվեր, նշվ. աշխ., էջ 140։

60 Սեբեոս, էջ 34։

61 Սեբեոս, էջ 62, Տրեվերը հիմնվելով ներշախիի վկայությունների վրա, քուշանների այս երկու թագավորներին նույնացնում է VI դ. վերջերին իշխած Բուխարայի թագավորների հետ (Нершахи, История Бухары. пер. Н. Лыкшина, Ташкент. 1897, стр. 13—14)։ Մարկվարտը Շավգին նույնացնում է 588 թ. տեղի ունեցած թուրք-պարսկական ընդհարման ժամանակ թուրքական զորքերի հրամանատար Շաբայի հետ, որը միանգամայն անընդունելի է։

Ինչպես տեսնում ենք, Սեբեոսը շարունակում է հիշատակել քուշաններին, թեև այդ ժամանակաշրջանում արդեն գործ ունենք թեոդոսիների թուլացած թագավորության հետ, որը ենթարկվել էր Թուրքական խականությանը և նրանց զորքի կազմում մասնակցում էր այն պատերազմներին, որ մղում էին Յուրքերը Սասանյան Պարսկաստանի դեմ։

Սեբեոսը իր վկայություններն ավարտում է Սմբատ Բագրատունու[62] գործունեությամբ։ Վերջինս, որը Վրկանի (Հիրկանիա) մարզպանն էր, որը 616—617 թթ. մեծ զորքով գնում է Արևելք՝ դեպի քուշանների երկիրը։ Նա անցնում է այն երկիրը, որ կոչվում էր Կոմշ, համալրելով զորքը, հարձակվում է քուշանների վրա և պարտության մատնում նրանց. «...անտի ի փախուստ դարձան զաւրքն Քուշանաց, և վանեցան առաջի զաւրացն Խոսրով Շմոյ, բազումք ի նոցանէ մեռան և բազումք փախստական գնացին։ Եւ նա դարձեալ բանակեցաւ յԱպր Շահր՝ ի Տոս գաւառի. և ինքն նստէր երեք հարիւր արամբք ի քաղաքագեղն՝ որ կոչի Խոռխտ»[63]։

Սմբատի զորքը հավաքվում է Տոս գավառի Ապրշահրում (Խորասան), որի կենտրոնը Սեբեոսը կոչում է Խրոխտ, թերևս այժմյան Թուսը։ Այս այն տեղն էր, որտեղ, ըստ Եղիշեի, իր զորքն էր հավաքել Հազկերտ II-ը։ Մինչ այդ, քուշանների թագավորը օգնության է կանչում հյուսիսային կողմի թագավորին՝ «Մեծէն Խաքանայ». «...Եւ եկն ել ամբոխ ի բիւրոյ ի թիկունս աւգնականութեան նոցա, անց գգետովն որ կոչի Վեհռոտ, որ ելանէ ի Թուրքաստանէ յերկրէն Եիղատայ, (զԴիոնոս եփեստեայս, զՇամանն և զԲրամանն, և հոսի ի Հնդիկս)։ Եւ բնակեալ փ վերայ գետեզրն՝ ատպատակս սփռեցաւ ընդ արևմուտս, և հասեալ յանկարծաւրէն պատեցին պաշարեցին զգիւղաքաղաքն, զի ունէր գեւղն պատուար ամրութեան շուրջ զիւրեաւ շուրջանակի»[64]։

Այս ընդհարման ժամանակ պարսիկները պարտվում են։ Սմբատը նոր զորք հավաքելով երկրորդ անգամ արշավի է ելնում «ի վերայ ազգին Քուշանաց և արքային հեփթաղայ»։ Սեբեոսի այս վկայությունն ունի հատուկ նշանակություն, որովհետև եթե Խոսրով Ա-ի արշավանքների մասին խոսելիս Սեբեոսը գրում է «քուշանների երկիր», «քուշանների զորք», «քուշանների թագավոր», ապա այժմ՝ «քուշանների ազգ» և «հեփթաղների թագավոր»։ Երկու տող հետո Սեբեոսի նույն տեքստում հանդիպում ենք «քուշանների թագավոր» տերմինին։ «... Ապա ի վերուստ իմն հասեալ աւգնութիւն՝ պատառի վերտ և ամուր բահլիկ և կուռ զրահին ամրութիւն արքային Քուշանաց ի նիզակէն Սմբատայ»։ Պարսիկների և թեոդոսիների այս ընդհարումն ավարտվում է Սմբատի հաղթանակով։ Նա հասնում է մինչև «ի Բահլ շահաստան Քուշանաց, և աւար հարեալ զերկիրն ամենայն, զՀար և զՎատագէս, զՏոխորոստայն ամենայն և զՏաղական, առնոյր և զբերդս բազումս, և զնոյնս քանդեալ աւերէր և դառնայր յաղթութեամբ մեծաւ և բազում աւարաւ, և երթեալ բնակէր ի Մարգ և ի Մարգռոտ գաւառի»[65]։

---

62 Ի տարբերություն Աֆրիկա աքսորված Սմբատ Բագրատունու, հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվող Սմբատը կոչվում է «բազմահաղթ», իսկ Սեբեոսը նրան մշտապես անվանում է Խոսրով Շում, որ պարսկերեն նշանակում է Խոսրովի ուրախություն։

63 Սեբեոս, էջ 66։

64 Նույն տեղում, էջ 67։

65 Նույն տեղում, էջ 68։

Սեբեոսի այս հատվածում հիշատակվող շրջաններն ընկած էին Բալխի և Մերվի միջև և, ինչպես արդեն մեզ հայտնի է, այդ ժամանակ հիշյալ շրջանները գտնվում էին Թուրքական խականության գերագույն իշխանության ներքո։ Պետք է կարծել, որ նրանք խականի հետ պայքարում էին պարսիկների դեմ։ Բացառված չէ նաև, որ քուշանների այս թագավորը ծագումով թեթալացի լիներ[66]։ Այսպիսով, քուշաններ տերմինը VII դ. դեռ շարունակում էր հիշատակվել և չէր կորցրել իր նշանակությունը։

Սեբեոսի վկայություններն ավարտվում են Սասանյան վերջին թագավոր Հազկերտ III-ի մահվան նկարագրությամբ, որը տեղի ունեցավ 651 թ., այսինքն՝ նկարագրվող դեպքերից տասը տարի անց։ Պատմիչի ասելով՝ արաբները հետապնդելով Հազկերտին, հասան նրան. «...մերձ ի սահմանս Քուշանաց (այսինքն Մերվի շրջանում) և կոտորեցին զամենայն զարս նորա։ Եւ փախուցեալ անկաւ ի զարս թէտալաց, որ էին ի կողմանցն եկեալ նմա յաւգնականութիւն»[67]։

Այսպիսով, «քուշանների սահման», «թեթալացիների զորք», «քուշանների երկիր» արտահայտություններն, ասես, կորցրել են իրենց քաղաքական նշանակությունը։ Հայ պատմիչների վկայությունները հավաստում են, որ և՛ քուշանները, և՛ հեփթաղները, և՛ թեթալացիները էթնիկապես ազգակից ցեղեր էին։

АРМЯНСКИЕ СРЕДНЕВЕКОВЫЕ ПЕРВОИСТОЧНИКИ О КУШАНАХ

ЖАСМЕН ЭЛЧИБЕКЯН

Резюме

Армянские средневековые источники содержат немногочисленные, но чрезвычайно интересные сведения об ираноязычных племенах, обитавших на территории Бактрии и Средней Азии. В армянских средневековых первоисточниках они известны как кушаны, теталийцы, эфталиты. Эти материалы проливают свет на многие события политической жизни Кушанского царства. Достоверность последних подтверждается иноязычными источниками. Армянские авторы были современниками, а иногда и очевидцами описываемых событий. Исследование армянских источников приводит к выводу, что кушаны, так же как теталийцы и эфталиты, являются родственными племенами.

---

66 К. В. Тревер, *նշվ. աշխ.*, էջ 143։
67 *Սեբեոս*, էջ 140։